Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-858-10.06.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 228-րդ հոդվածը լրացնել նոր 5.1.-ին մասով հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Կադաստրային գնահատման հարկային տարվանից հետո կադաստր վարող մարմնում առկա հաշվառման (այդ թվում՝ ընթացիկ հաշվառում իրականացնող իրավասու մարմնից ստացված) տվյալների համեմատությամբ մինչև անշարժ գույքի հաջորդ կադաստրային գնահատման հարկային տարին ներառյալ ընկած ժամանակաշրջանում անշարժ գույքի հարկման բազան կարող է ճշգրտվել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի իմաստով պետական գրանցման ժամանակ թույլ տրված սխալների ուղղում կատարելու հետևանքով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանող օրենքի և Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող 2-րդ հավելվածի գնահատման կարգերով հաշվարկվող բանաձևերում շինության կամ հողամասի մակերեսի կամ գործակիցների մեծությունների փոփոխման արդյունքում: Անշարժ գույքի հարկման ճշգրտված բազան հիմք է ընդունվում 2021 թվականի հունվարի 1-ից մինչև սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հաջորդ

կադաստրային գնահատման հարկային տարին ներառյալ հարկման բազան որոշելու համար։»։

Հոդված 2. Օրենսգրքի 401-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«4. Օրենսգրքի 228-րդ հոդվածի 5.1-ին մասով սահմանված հիմքերով անշարժ գույքի հարկով հարկման բազայի ճշգրտման հետևանքով առաջացած համապատասխան անշարժ գույքի հարկի լրացուցիչ գումարների նկատմամբ տույժեր չեն հաշվարկվում՝ սկսած 2021 թվականի հունվարի 1-ից մինչև տվյալ փոփոխությունների ամիսը ներառյալ, եթե այդ անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարված են եղել Օրենսգրքով սահմանված ժամկետներում։»։

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա։

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված հիմքերով լրացուցիչ առաջացած անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունների վերահաշվարկ՝ հիմք ընդունելով սույն օրենքով սահմանված կարգավորումները։

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-858-10.06.2024-ՏՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԾԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 228-րդ հոդվածը լրացնել նոր 5.1.-ին մասով հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Կադաստրային գնահատման հարկային տարվանից հետո կադաստր վարող մարմնում առկա հաշվառման (այդ թվում՝ ընթացիկ հաշվառում իրականացնող իրավասու մարմնից ստացված) տվյալների համեմատությամբ մինչև անշարժ գույքի հաջորդ կադաստրային գնահատման հարկային տարին ներառյալ ընկած ժամանակաշրջանում անշարժ գույքի հարկման բազան կարող է ճշգրտվել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի իմաստով պետական գրանցման ժամանակ թույլ տրված սխալների ուղղում կատարելու հետևանքով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանող օրենքի և Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող 2-րդ հավելվածի գնահատման կարգերով հաշվարկվող բանաձևերում շինության կամ հողամասի մակերեսի կամ գործակիցների մեծությունների փոփոխման արդյունքում: Անշարժ գույքի հարկման ճշգրտված բազան հիմք է ընդունվում ~~համապատասխան փոփոխությունների ամսվան նախորդող~~2021 թվականի հունվարի 1-ից մինչև սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հաջորդ կադաստրային գնահատման հարկային ~~տարվա և վերջինիս հաջորդող երեք հարկային տարիների~~տարին ներառյալ հարկման բազան որոշելու համար:»:

Հոդված 2.- Օրենսգրքի 401-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«4. Օրենսգրքի 228-րդ հոդվածի 5.1.-ին մասով սահմանված հիմքերով անշարժ գույքի հարկով հարկման բազայի ճշգրտման հետևանքով ~~անշարժ գույքի գծով հարկային պարտավորությունների մասով առաջացած համապատասխան անշարժ գույքի հարկի գումարների~~ առաջացած համապատասխան անշարժ գույքի հարկի լրացուցիչ գումարների նկատմամբ տույժեր չեն հաշվարկվում՝ սկսած ~~փոփոխություններին անմիջապես նախորդող կադաստրային գնահատման հարկային տարվանից~~ 2021 թվականի հունվարի 1-ից մինչև տվյալ փոփոխությունների ամիսը ներառյալ, եթե այդ անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարված են եղել Օրենսգրքով սահմանված ժամկետներում:»:

Հոդված 3.-

3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո և դրա գործողությունը տարածվում է ~~2024~~2021 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

~~3.~~4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված հիմքերով լրացուցիչ առաջացած անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունների վերահաշվարկ՝ հիմք ընդունելով սույն օրենքով սահմանված կարգավորումները:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-858-10.06.2024-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը և համարակալումը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի և 3-րդ մասի պահանջները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-3-րդ հոդվածներ	Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակը ներդրվել է 2021 թվականի հունվարի 1-ից՝ առաջարկում ենք Նախագծում կատարել համապատասխան փոփոխություններ, որոնց համաձայն Նախագծով նախատեսվող փոփոխությունների գործողությունը կտարածվի 2021 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	Հարկային օրենսգրքի 228-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ անշարժ գույքի գնահատումը կամ վերագնահատումը (օրենսգրքի 11-րդ բաժնում՝ կադաստրային գնահատում) կատարվում է երեք տարին մեկ անգամ՝ կադաստրային գնահատման հարկային տարվա հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով: Գնահատված կամ վերագնահատված կադաստրային արժեքը (հաշվարկային զուտ եկամուտը) հիմք է ընդունվում գնահատման կամ վերագնահատման հարկային տարվան հաջորդող երեք հարկային տարիների համար հարկման բազան որոշելու համար, ուստի անհասկանալի է ճշգրտված հարկման բազան փոփոխությունների ամսվան նախորդող կադաստրային գնահատման հարկային տարվա համար ևս հիմք ընդունելու կարգավորման նախատեսումը:	Ընդունվել է մասնակի:	Ընդունվել է մասնակի:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք «անշարժ գույքի գծով հարկային պարտավորությունների մասով առաջացած համապատասխան անշարժ գույքի հարկի գումարների» բառերը փոխարինել «առաջացած համապատասխան անշարժ գույքի հարկի լրացուցիչ գումարների» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածում լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված հիմքերով լրացուցիչ առաջացած անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունների վերահաշվարկ՝ հիմք ընդունելով սույն Օրենքով սահմանված կարգավորումները:»:	Ընդունվել է:	Ընդունվել է: